



ԿԵՆՏՐՈՆԻ ՄՅՈՒՆ

Ջաղաքալին «Կոմարի» օրաթերթի հավելված

1990 թ. դեկտեմբեր, № 7: Գինը՝ 50 կոպ.:



Անհնական: Օդանավակայանը դեկտեմբերի 8-ին: Ոգնության առաջին ինժեները:

Ա Ր Դ Ա Վ Ի Ր Ք

8-դեկտեմբերի, 1988 թվական: Անհնական:

Միջազգային առաջին գիշերը մեծ արհավիրքից հետո, երբ այդպես էլ ոչ ոք աչք չփակեց, ավելի քան ցուրտ էր նախորդած գիշերներից: Երկինքը անապասելի պարզեց, աստղաշար երկնակամարում անսովոր կարմիր լուսին կախվեց: Եվ այդ տեսարանից մի նոր սարսուռ տարեցին իսրայելների մոտ կոչ եկած երեխաները, ավերակների, քարակույտների շուրջ շվար մնացած մարդիկ:

Չարագույժ նախախնամու թո՛ւն: Երբ է բացվելու առավուտը, որ հույսի, հրաշքի ըսպասումն ուներ... Գուցե լուր բերո՞ղ լինի որդուց, եղբորից, մորից, կնոջից:

Խելակորույս, սպեներ մի կին անհրակից ավերակ էր անցնում. սխր, թունկա դրս

րոցից տուն չի եկել, աղչելս՝ աշխատանքից... Գուցե ստիքի մեջ առած տղամարդիկ արտաավում են անգորությունից... Չկա աշխարհում բաներ՝ Ակարագրելու տղամարդկային վիշտը, որդեկորույս մոր տառապանքները, յստով փլատակների խոռոչներից եկող հարսաւանքներ... Փողոցներում հատ ու կենտ կանգում մնալու ծամացուցների վրա բարացել են սլաքները՝ 11-անց 41 բույն...

Այլևս Ակարագրություններ պետք չեն, պետք չեն իտքեր... Մենք, որ հագարավոր, տասնյակ հագարավոր դոնորների արյունով նույնամուտ ենք, նույնամուտ ենք տեսնում ու գգում, տխրում, լախ ու նաև՝ տոկում: Համագային պս աղետի ժամին բոլոր ող-
(Չարունակությունը՝ 2-րդ էջում)



Երևանի «Ջվարթնոց» օդանավակայանը դեկտեմբերյան ավն ողբերգական օրերին դարձել էր համայն աշխարհի գթասրտության կենտրոն:

Ա Ր Դ Ա Վ Ի Ր Ք

(Սկզբը՝ 1-ին էջում)

դություններից պատեղ են շտապում նրանք, ովքեր իրենց մեջ ունեն գտնում օգնելու, աստար լինելու աղետյալներին:

Լեհիսական, ժամբից ավեր, գույում ապրած իմ Գյումրի... ու ոչ մի աչք չի կարող արցունքով շցվել, ոչ մի ձեռք չի կարող անգործ մնալ...

Ինչ փույթ, լրագրող ես: Այստեղ պետք չէ հարցնել ո՞վ ես, ինչ կազմակերպությունից ես եկել, որտեղից ես... Անունները նույնացել են՝ մարդ: Ձեռքերը մի ծառայություն ունեն... գրկել գտնված հարազատին: Ամեն անգամ կենդանի հաղտնարեղված մի մարդ՝ մի աշխարհ: Մխիթարություն է...

...Ոչ ոք դատողություններով չի գրադվում: Խոսում են կարճ հարց ու պատասխանով, մեկ-երկու բառով: Ջինվորները, որ դեռ երեկ պարետային ժամի հսկիչներ էին,

այսօր արյուն են տալիս տուժածներին, արտակարգ վճռա կան գործողություններով փրկարար աշխատանքներ են իրականացնում, ողբերգության այս ժամին նեցուկ կանգնելով մեր ժողովրդին: Բեռնատար մեքենաների թափքերից սնունդ համթերք են բաժանում, ջրով լի ցիստեռնաների ծորակներից բաժակ ու շիշ են լցնում:

Կոունկները զգուշորեն հատահատ բարձրացնում են պանելները, մարդկային ձեռքերը սամոխմետր առ սամոխմետր մաքրում են հողը, բարեբեկորներ շոտ տալիս: Երբեմն այս ու այնտեղից կանչեր են լսվում՝ «բժիշկ, քույր... պատգարակ քերեք...»: Մարդիկ մի կողմ են դառնում, սպիտակ խալաթներով երիտասարդներ վազում են ձայնի կողմը, ոչ մի կանչ անպատասխան չի մնում...

Գթատատության հուզիչ պահերը շատ են. ամբողջ երկիրն է օգնության հասել, մտ-

տիկ ու ամենահեռավոր քաղաքներից ու գյուղերից, շրջաններից աղետյալների համար բերում են ամենակենսական անհրաժեշտության իրեր՝ սննդամթերք, տաք հագուստ, փրաններ ու ծածկեր, հզոր տեխնիկա:

Սփյուռքը կիսելով իր եղբայրների ու քույրերի ծանր վիշտը, ամենագործուն աջակցությամբ է ուղքի կանգնել: Այդ ամենը գիտեն հյուրընկալ լեհիսականցիները, գիտեն, թեև թերթ չեն ստանում, ուղիտ կամ հեռուստատեսային հաղորդումներ չեն դիտում: Գիտեն... ու զարմանում են, ահավոր աղետ ապրած մարդիկ որտեղի՞ց են գտնում շնորհակալության խոսքեր իրենց կարեկցողներին հայտնելու համար:

...Ծատերն են այս օրերին գալիս Լեհիսական: Գալիս են ամենամկիրակյան զգացումներով աքված: Ո՞ր մեկին կարող ես սանել՝ մի գա: Բայց պետք է հասկանալ: Լեհիսական-Երևան ավտոմայրուղին այսօր կյանքի փրկության ճա-

նապարհ է, օգնություն իրականացնող կազմակերպությունների ճանապարհը, անհրաժեշտ տեխնիկա փոխադրելու հուսալի ճանապարհը... բարի լուր հասցնելու ճանապարհը:

...Քաղաքում փրաններ են խփվում, խարույկներ են դարձյալ վառվում: Դրանցից մեկի մոտ հինգ-վեց տարեկան մի աղջնակ աշակերտական տետրի թղթի վրա բարձրահարկ շենքեր էր նկարում: Բոլոր շենքերը մանկան անվարժ ձեռքի տակ թեքված են, ծոտ տիկ: Նայեցի, ցնցվեցի... Որքան մեծ են երկրաշարժից հետո կանգուն մնացած հատ ու կենտ շենքերին: Իսկ երեսխան շենքերի պատուհաններից դուրս նայող մարդիկ էր նկարում...

Նա կոտեմի նոր Լեհիսականը, կոտեմի վերածնված իր քաղաքը, կապրի աշխատասեր ու արարումով իմաստնացած իր համաքաղաքացիների հետ:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
20-ը դեկտեմբերի, 1988 թ.
«Կոմայրի» («Բանվոր»)



ՕԼԳԱ ԺՈՐժԻԿԻ
ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հղկող հաստոցների գործարանում էր աշխատում Օլգա Ժորժիկի Գասպարյանը: Նրա ծնունդը գրանցվեց 1958 թ. մայիսի 5-ին: Աչքալուսանքը բարի էր... Ռուսումնաության երկար ու ձիգ տարիներին Օլգան սկսեց շփվել գեղեցիկի հետ: Աշխատելով հաստոցաշինական արդյունաբերությունում՝ հղկող հաստոցների գործարանում, նա համեմատելու էր իր ազատ ժամանակը նկրելու նկարչությանը: Կյանքի չափ սիրում էր այն:

...Եվ նա էլ այն հիշաշար օրը դարձավ բազում երիտասարդ զոհերից մեկը, որը դեռևս գտնվում էր իր կյանքի երրորդ տասնամյակի շեմին և դեռ պետք է ապրեր և իր ստեղծագործ ուժը ներդրեր հաստոցաշինության մեջ:



ԿՈՒՑԱ ԳԵՎՈՐԳԻ
ՄԿՐՏՅԱՆ

Գոնե հիմա դժվար է հաշվարկել, թե նա՞ Կոլյա Գևորգի Մկրտչյանը (ծնվ. 1930 թ.) իր կյանքի ընթացքում բանի անգամ է մոտեցել քուրալին, ձեռքը անել մեծ ու փոքր մուրները, և քուրալից հանելով կարմրատես մետաղը դրել զրկ համին ու խփել: Ու խփել է մինչև որ ստացվել է այն, ինչ որ պահանջվում էր:

Իր կյանքի վերջին տարիներին Կոլյա Մկրտչյանը աշխատում էր գնացքների ուղեկցորդ: Քամից նա պացել է երկաթե ուղեների վրա: Ամեն հերթափոխից հետո տուն վերադառնալով, նա իր հայրական ջերմ վերաբերմունքն էր թողնում իր ընտանիքին, որին սիրում էր իր կյանքի չափ: Ի՞նչ իմանար նա, որ դաժան դեկտեմբերի 7-ը պետք է լիներ իր կյանքի վերջին օրը:

ՀԵՆՐԻԿ ԷԼԱՍԿՅԱՆ



ԱՐՄԳԱՄ...
Լուսանկարը՝
ՀՄ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



Լեհիսականի մարզադաշտում
Լուսանկարը՝ Վ. Կոտոփի

ԿԱ ԱՅՄՊԻՍԻ ՄԻ ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՈՐՈՆԵԼ ՈՂՋԵՐԻՆ

Որքան շատ էինք մենք ծառայում սոցիալիստական, թե ինչպես են կազմակերպվում, ինչպես են համարվում աշխատանքները, մեր՝ քաղաքացիների մոտ սկսում էր ավելի գլուխ բարձրացնել ինչ-որ անգիտակցական բողոքի գագաթում: Հասկանալի է, որ մարդիկ առաջին անգամ են ընկել մեզ վիճակի մեջ, որ չկա փորձ (չնայած տարբեր աղետներ են եղել մեր երկրում նույնիսկ վերջին մի քանի տարիներին, չկա անհրաժեշտ պատրաստություն) մենք չգիտեինք հիմնականում՝ իսկ ինչպես կարելի է գործել տարբեր թելադրած հանգամանքներում:

Ցանկացած գործ հարկավոր է կատարել պրոֆեսիոնալ մակարդակով: Դա արսիմա է: Ավաղ, մեր առօրյա գրույցներում շատ հաճախ տեղ գտած տեսական ցանկություններն իր մերկ հատակությամբ ու անգործությամբ բացահայտվեց այստեղ, աղետի շրջանում:

Մենք արդեն գրել ենք, որ երկրաշարժից հետո ամենատաքին ժամերին փլատակների տակ շատ թաղվածներ փրկվել են իրենց հարազատների, աշխատակից ընկերների, տեղացի կամավորների կողմից: Սակայն ավելի շատ էին փլատակների տակ դեռ թաղվածները: Նրանց հանելու համար ոչ միայն տեխնիկա էր պահանջվում, այլև մասնագետներ, մարդիկ, որոնք գիտեին ինչպես որոնել մարքել փլատակները և անցքեր բացել օգնություն սպասողների համար:

Այսպիսի մասնագետներ սկսեցին ժամանել Հայաստան, ամենից առաջ Լենինական և Սպիտակ երկրորդ և երրորդ օրը: Լենինականում արդեն առասպելներ էին հյուսել Դոնեցկի լեռնափորարարների պրոֆեսիոնալ բարձր մակարդակի մասին: Նրանք աշխատում էին գոլպայի ֆաբրիկայի փլատակների մարքման ուղղությամբ, շատերը պարտակա են նրանց կյանքով: Սակայն, չնայած այդ տղաների քաջությանն ու պատրաստությամբ մենք բարդ պայմաններում, երկրաշարժի գոհերի որոնումն այսպես ասած նրանց «պրոֆիլը» չէր: Դեռ ատանձնապես շատ լեռնափոր կարարներ էլ էին կարող առանձնացնել երկրի հանքախորշերը: Ուստի մեր կառավարությունը մեծ երախտագիտությամբ բնորոշեց շատ երկրների առաջարկը՝ Հայաստան ուղարկելու վարձված մարդկանց հատուկ խմբեր, մասնագետներ առաջին էքսպեդիցիան, աղետի մեծ երկրաշարժի պայմաններում աշխատելու համար:

Եվ այստեղ մեր բախտը բերեց: Լենինականում մենք երանք հենց այն պահին, երբ այստեղ էր ժամանել Ֆրանսիայից եկած փրկարարների խումբը:

(Շարունակելի)



ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

(ՄԵՐԳԵՑ ԵՎ ՍՏԵՓԱՆ ԴԱՎԹՅԱՆՆԵՐ)

ՄԵՐԳԵՑԸ ուղիղ 40 տարեկան էր, բարձրահասակ, գանգրահեր, միշտ ծպիտը դեմքին: Բարի էր, մարդամոտ, սիրում էր կրանքը: Ընտանիքի հոգատար հայր էր. հպարտանում էր երկու որդիներով, նրանց հետ մեծ հույսեր կապում: Ավաղ, «Նոսակյունի» անհիճալ թաղամասի շենքերից մեկը դարձավ նրա վերջին հանգրվանը այս կյանքում...

ՍՏԵՓԱՆԸ Սերգեյի ավագն էր: Սովորում էր № 26 դպրոցում, լավ էր սովորում, հրաշալի ֆուտբոլ էր խաղում: Նրա հետ մեծ հույսեր էին կապում մարզիկները:

Շահատագրի չար խաղ էր երևի, որ չփրկված դպրոցում նույնիսկ պետք է երեխաներ զոհվեին, և երկուսից մեկը նա եղավ...

Անցել են օրեր, ամիսներ, գործվում են նաև տարիներ, սակայն Սերգեյ և Ստեփան Դավթյանների կորուստն ցավը չի մեղմանում նրանց հարազատների ու մտերիմների համար...



ԼԴՎԱՐԴ ԿԱՐԵՆԻ ԴԱՎԹՅԱՆ

Ժամեր անց, երբ նրան հանեցին Շիրակացի փողոցի բարձրահարկի փլատակների տակից, ասում էր. «Ինձ ոչինչ չկա, մի անհանգստացեք, սակայն ճզմվածքից դադարել էին գործել երկրամեները: Ավաղ, ոչ Երևանում, ոչ էլ Մոսկվայում բժշկներին չհաջողվեց փրկել նրան: Մահացավ, այդպես էլ անտեղյակ, որ նույն շենքի մեջ զոհվեց կնոջ եղբայրը, որ ծանր վերքեր ստացած կնոջ կրանքը այնուամենայնիվ հաջողվեց փրկել, որ հրաշքով փրկվել էր նաև միակ դուստրը:

Լճվարդի մայրը զոհվեց իր միակ, 27-ամյա որդի-սպանելից, իսկ քաղաքը՝ իր համեստ ու շնորհքով երիտասարդից:

ՄԱՐԻՆԵ ԿՈՐՅՈՒՆԻ ԴԱՎԹՅԱՆ

Մարինեն սովորում էր № 9 դպրոցի 7-րդ դասարանում: Ուշիմ, համեստ ու աշխատասեր երեխա էր, ծնողների պարծանքը: 1988-ի չարաղետ օրը իր հարյուրավոր հասակակիցների նման նա էլ դպրոցից տուն չդարձավ՝ չսպիացող վերք թողնելով ծնողների ու հարազատների սրտին: Դամաճ ճակատագիր, հայի ճակատագիր...



ԱՆԱՀԻՏ ՌՈՒՄԵՐՏԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

1988 թ. դեկտեմբերի 6-ի երեկոյան ծնողներին պատմում էր զվարճալի պատմություններ, չիմանալով, որ անցկացնում էր իր կյանքի վերջին երեկուն ծնողների, քույրերի, եղբոր, հարազատների հետ: Անհամբեր սպասում էր ձյան գալը: Սիրում էր մեծ-մեծ փաթիլներ, սիրում էր քայլել դրանց ներքո և տուն դառնալ շունամուշիկի տեսքով, նուրբ այտիկները կարմրած...

Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում սովորելուց հետո ընդունվեց № 41 ուսումնարանի դերձակ-ձևարարների խումբը: Ծուրջ երկու տարի հետո կորսք տեղափոխվեց № 33 ուսումնարան: Քիչ ժամանակ էր մնացել այն ավարտելուն:

Դեկտեմբերի 7-ի առավոտյան եղբորը՝ Արսենին տարավ մանկապարտեզ: Ինքն էլ գրեց արտասրբական պրակտիկայի...

Միությունով մեկ փնտրվում էր: Ծառերը հավատացնում էին, որ Անահիտին տեսել են այս կամ այն հիվանդանոցում, նույնիսկ մեկն էլ պնտում էր, որ տեղափոխել են Ամերիկա (զանգերն այդպես էին վավերացնում): Որոնումները ավարտվում էին: Միայն երեք ամիս անց գտնվեց դեռ 19-ը չբողորած Անահիտի անձանաչելի աճյունը:



ՀԱՍՄԻԿ ՅՈՒՍԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ (ԹՈՒՄԱՆՅԱՆ)

Ենկալ է 1951 թվականին, Լենինականում, կույրերի միափորման ուսումնարանում: Կյանքի միակ վերջին ընտանիքում:

Շահունյանի անվան միջնակարգ դպրոցում սովորելուց զուգընթաց, համախում էր № 2 մշակույթի տան «Կարմիր խաչի» խմբակ: Յուրաքանչյուր անգամ տուն գալով, պատմում էր կոլորածի մասին: Որքան էր ուրախացել, որ արդեն երեքամյակով աշխատել գիտեր... Հետո ուսումը շարունակեց Կ. Սարգսյանի անվան դպրոցում, բայց այդպես էլ չհաջողվեց սովորել բժշկական ուսումնարանում:

Անուսանցավ և մեկնեց նախ Դոնեցկ, ապա՝ Սվեդլոդոլ: Մոտ 10 տարի այնտեղ ապրելուց հետո, ընտանիքով վերադարձավ հայրենի քաղաք: Ամուսնու և երկու դուստրերի հետ ստեղծելով մի հաշտ ընտանիք, սիրով ապրում էին իրենց համեստ վատակով և աղոթում Աստծուն...

1988 թ. դեկտեմբերի 7-ին նա էլ դարձավ աղետի զոհ: Ամուսինը բոլոր ջանքերը գործադրեց կնոջ փրկելու համար, անգամ հանեց փլատակների տակից, բայց ուրախությանը հաջողվեց տիրությունը, ժամեր անց նա այլևս չկար:

ԱՐԱՄԱՅԻՍ ՇԻՐԱԶՈՒՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1972-1988)

Միերի Հայաստան, իմ անփոխարինելի ընկերուհի, անուշիկ բույրիկ: Հիմա, երբ հուշ ես դարձել, քեզ հիշատակի խոսք եմ գրում:

Կյանքի ո՞ր օրերն էր և ո՞ւմ հրամանով երկրաշարժ տեղի ունեցավ: Այդ չարաբաստիկ աղետից դարձար հուշ: Մոռանալ չեմ կարող... Զ. Վերջին զանգին մայրդ ինձ էր ուղարկում վկայական ստանալու: Դա վերջին զանգ չէր, սիրելիս, այլ քեզ նման անմեղ զոհերին դպրոց կանչելու դրոշմ էր:

...Գեղեցիկ էր իմ ընկերուհին, տնարար, մաքրատեր: Սովորում էր Դարիքջանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում:

Հայաստան, իմ ընկերուհի, ամեն օր, կամա թե ակամա անցնում եմ ձեր դպրոցի կողքով: Չեմ նայում դպրոցին, գիտեմ, որ անեծք պիտի շնչեմ այն շինարարների հասցեին, որ չկարողանալով մի ամուսնու կանգնեցնել, փշրեցին հարյուրավոր ընտանիքների սրտեր:

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ



ՔՈՒՅՐ ԻՄ ՌԱՅԱ (ԳԵՂԵՏԻԿ)

ՌԱՅԱ (ԳԵՂԵՏԻԿ) ՆԱԳՈՒՆԵՆԻ ՐԱՎԱՆՅԱՆ. Ի՞նչ էիր շնչում, քույր իմ, երբ այդ անհիճալ առավոտյան ցավից անտեղյակ՝ նորա ծին որդուդ՝ Վահանիկդ էիր լողացնում... Մայրական գորովով լցված քո հոգում, անշուշտ, հրճվանք ու խիճկ կար այնքան... Երազում էիր որդուդ Գնորգ Չաուշ և Անդրա միկ դարձած տեսնել:

Այդ ե՞րբ էր, որ ընդունվեցիր Կոմայրու Մ. Նալբանդյանի անվան № 11 միջնակարգ դպրոցը, հետո պոլիտեխնիկական ինստիտուտ: «Էլեկտրոն» գործարանում... ծանոթացար սպագա ամուսնուդ ու ծնվեց որդիդ...

Քույր իմ, ո՞չ, դու չե՞ս մա հացել, չե՞մ հավատում, քանի դեռ բարախում են մեր սրտերը, դու կապրե՞ս հարսանեկան սպիտակ զգեստով: ...Իսկ մենք միտքարվում ենք՝ միայն ամեն օր փոխելով նր կարդ գարդարող ծաղիկները:

ԴԱԺԱՆ ՍԻՄՖՈՆԻԱ

ԱՆՈՏ ԳԵՌԳԵԱՆ

(Լինիակների Ա. Մուսիկանի Անուան Քատրոնի)

ՀեՍՀ Վաստակաւոր դերասան)

(Սկիզբը՝ «Հիշողութեան» հավելվածի № 6-ում)

Էր. Բամուց մեղմ օտարում էին երկար վարերը... Գիտում էր անբախտներն ու հերթ անհոգ անյուսման մարդկանց, որոնք փրկեցին իրեն ու իր հրաշք գաւախին, որ իր հիշով նեղում էր մահա գոյժ մրտիկներն ու աշխարհին, ազդարարում կեանքը շարունակում է:

Քանզուց Շիրակի ոստան Գիւմրին, անբախտ դարձաւ: Կենսախիւնը, շուշլ ապրող, հիւրասեր, պատուասէր ու սրամիտ մարդիկ Բամուցն վայրկեանում անակնկալ դարձան դազադազորներն ու գերեզմանափորներ: Ամենուր հեղում էր բաների սառը ու չոր գրեգոց: Անօրեան, հրաշքով փրկուած մարդիկ սմուում ու ծնւածում էին հարազատների ողբերգական կորստից:

Օգնեցէ՛ք: ... Ատաւամբարձիչն էր, փորիչներ շրջապատել են փլուած դպրոցի մնացորդները... Քիչ երեխաների է շաշողուն փայտիչ ու փրկուել: Խոնոն անող մոլորադր, հարազատները, դէս ու դէն վազելով, խնդրում, աղաչում են արագացնել փլատակների մաքումը: Վարձողները լուրքեանք ու սրտի խոր կակիծով կատարում են ժողովրդի ասածը... Կոունկր հոնդիւնով մտնեցաւ փլատակներին ու կանգ առաւ: Մարդիկ մի կերպ ճակատաբեր էին բացել դէպի հսկայական պանելը: Մետաղեայ կեանքը անցկացրին երկաթեայ օղակներին, ճոնչաց կոունկն ու պանելը դանդաղ վեր բարձրացաւ, բախտող փոշին խնդրեց մարդկանց... Տանկանք կիսարաւորացուած պանելը տանտանուց ու օդում կանգ առաւ... Նստած կունկալարը լուր էր... գոլթը բեխուել էր ուսին... Մտի պայթիւն յուզմունքից: Տանկանք դրոցակներն արեան մեջ շաղախուած տափակել էին գետինին... Մարդիկ խելացնոր վազեցին ու ողբաձայն բնկան իրենց հարազատ երեխաների դիակների վրայ, գրկած անշունչ մարմինները, դուրս փախան մահատան փոսից... Մահը որքան ժպտուն սեւ աշուկներ, բողբոջուն, այ շրքունկներ հողի սեւ գրկում գրեց, զվ դարերի վկաներ՝ հայոց լեռնացած ու լուր լեռներ...:

Օգնեցէ՛ք: Քաղաքի արեւմտեան մասում բարձրացած «Մայր Հայաստան» յուշեղանակը, աչք երկինք պարզած, կարծես բողբոջում էր բնութեանն ու աստուծուն՝ իր հաղափին ու ժողովրդին հասած կարճաճառ ար աղէտի, բիբիական անբախտ համար...: Երկնակամարը լուր էր ու սառը...: Ձմեռն աստուծանեկիք սեղմում է գեխախար, սառը ու գառը ձիւնը... Անօրեան մարդիկ կարծես ուզում են

մտնել բոցկլտացող խառոչի ներքի մէջ: Իր շրջագիծը արարող բուռնագույն արեւը չի զաղարում արեան անձրեւի մաղել...:

Արեան անձրեւի տակ դանդաղ քրչում են բախտող մարդիկ ու անբախտները...: Քրչուելուց խառխուում, փրկում ու փլուում են կիսախաղաղ բնակարանները...: Քողովրդի շրքներին, անշունչ մեռնում են մարդիկ...: Ետեւորին, անշունչ երեխաները լաքերի մէջ փաթարուած, պառկած են փողոցներում առաջացած արեան լեակներում...:

Տէր Աստուած, օգնեցէ՛ք... օգնեցէ՛ք...:

Վշտով շաղախուած ամբողջները յամառութեամբ ելեւում են անբախտներ, փլատակներից գտնում իրենց հարազատների մարմինները, այս ու այն կողմ բռած մարմնի մասերը, երբեմն էլ անձանօր մարդկանց մարմնի մասեր, հողախառն լցնում դազադները՝ արցունքով, անէծքով յանձնում հողին: Պայծառ, կենսախիւնը, իրենց հաղափի նկատ ու կացով հպարտացող մարդիկ՝ երկնային պատժով դարձան ամենուրեք բախտուած դազադներ, դազադներ... գերեզմաններ, գերեզմաններ: Քաղաքահազար հանգուցյալները, կարծես, պատժուող անվերջապառի հեկիաթի նման, մարդկանց ուսերուն դրած, գիշեր ու ցերեկ դանդաղ շարժում ու շարժում են գերեզմաններ, գերեզմաններ...: Պանել-պրոնուել լեցում են գերեզմաններին հողին յանձնող մարդկանց ակնաջերմում մեղմ նկում են դուրսուկներ... ողբը, լացն ու կոծը իրար շաղախուած փշրում են Բամուցի արեան գերեզմաններում...: Հին, մամուկալած գերեզմանափորները լուրքեանք են ընդունում հազարաւորների կորուստը ու երբեք հարազատների ողբը...:

...Որքան մարդիկ Արցախի գաւն ու յոյսը ստանեւում, Հայրենիքի համար հող դարձան...: Զօրութեան մեր մտքին ու բազկին՝ սերունդներին հասցնելու մեր անկատար իղձերը:

Երկրաշարժը իր դաժան սիմֆոնիայով վերադարձնում անմահացրեւ Հայաստան աշխարհը...: Ետեւորին սրտներս եղան սիրուած...: Գաղթականութեան ու որբութեան հեկիաթային վիշապի նման փաթարուածին հալ ժողովրդի վզին. գրուեցին, բախտեցին ու ծաւառեցին ով որտեղ կարող էր՝ հայնական օջախի կարող սրտներում:

Օգնեցէ՛ք... օգնեցէ՛ք...:

Ով տանած աստուած, տեղ գերեզման ու երկրային իրաւունքները յանձնելու երկուստարդ ու կարող աստուած

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԼՈՒՍԵ ԵՐԱԶՆԵՐ ԱՆԿԱՏԱՐ ՄՆԱՑԻՆ

ԳԱՅԱՆԵ ՎԱՀՐԱՄԻ ԹՈՐՈՍՅԱՆ



Ծնվել է Կումայրիում, 1977 թ. նոյեմբերի 7-ին: Այդ օրը տոնում էինք Գայանեիս 11-րդ տարեդարձը: Մի տեսակ թախծուտ էր դարձել, բոլորովին չէր ուրախանում: Դրանից ուղիղ մեկ ամիս անց երկրաշարժը Գայանեիս թողեց № 16 դպրոցի փլատակների տակ: Դպրոցում լավ

էր սովորում, ամենքի կողմից սիրված աղջնակ էր, իսկ տանը իմ առաջին օգնականն էր, որից գրկվեցի ընդմիջու: Միակ միտքարանքս պատիճ փակցված նրա լուսանկարն է, կողքին թարմ ծաղիկներով միշտ բուրդով ծաղկամանը, որն այնպես շատ էր սիրում Գայանես:

ՍՈՒՍԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՄՎԵԼԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ժպտում է նա նկարից, կարծես բան է ուզում սանը...

Ինչ իմանար, որ կարող էր Այդքան շուտ բաժանվել:

Ծնվել է 1978 թ. Կումայրի

ում: Սովորել է Ղուկաս Ղուկասյանի անվան դպրոցում: Գերազանց գնահատականներով էր ուսանում, 8-րդ դասարանում էր: Դեկտեմբերի 18-ին լրանում էր 9 տարին, որին չարժանացավ բնության չար քնամառայրով...



ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Կյանքը չճաշակած, դու էլ հուշ դարձար, սիրելի Սամվել:

Սամվել Այվազյանը ծնվել է 1980 թվականի հուլիսի 21-ին: Սովորում էր Արայոն Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանում: Կյանքից հեռացավ տարածում, մանկական ամենի տարիքում, լուսն երազները անկատար թողած...



ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ ՄԻՇԱՅԻ

Ծնողների ավագ որդին, 7 տարին նոր էր բոլորել, տան ուրախությունն ու գանձն էր: Ծնվել էր 1981 թ. օգոստոսի 15-ին: Եվ վերջապես եկավ բաղձալի սեպտեմբերը: Ինչպիսի հպարտությամբ ու բազում երազանքներ պահած սրտում ծնողները առաջին անգամ տարան Հովիկին դպրոց: Սովորում էր № 9 միջնակարգ դպրոցում: Իր ստացած գերազանց գնահատականներով փոքրիկ, խելացի մանչուկը ամեն օր ուրախացնում, կարծես թեք էր պարզում ծնողներին: Բաց այդ ամենը տեղեց ընդամենը երեք ամիս...



ԱՂԵՎՅԱՆ ՈՍԱՆԻԿ ՎԱՐՈՑԻ

Այնքան կարճ կենսագրություն ունեցավ լուսանկարից նպոդ այս ուշիմ, խելոք մանուկը: Ծնվեց 1980 թվականին, զոհվեց...

Արայոն Պետրոսյանի անվան № 10 դպրոցի երկրորդ դասարանում էր սովորում Ռազմիկ Աղեվյանը: Ժպտեք, գրավիչ այս երեխան աչքի էր ընկնում աշխատասիրությամբ, աշխույժ բնավորությամբ: Հունորի գագուտով էր օժտված փոքրիկ Ռազմիկը. սիրում էր երաժշտություն, անկերջ խաղալ, սիրում էր համադասարանցիներին, առաջին ուսուցչուհուն, բոլորին, բոլորին...



ՎԱՐԴՈՒՀԻ ԼՅՈՎԱՅԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Մոր միակ դուստրը. մնաց հի էր, գերազանցիկ՝ վարլուսանկար, հիշողություն: Դուհին: Հոգում փայտայում 1978 թ. հունիսի 14-ին էր բժշկուհի դասնալու երաժնված այս աղջնակը Արաւանը: Ծառ էր սիրում երգություն Պետրոսյանի անվան ու երաժշտություն, հատկադպրոցի 9-րդ դասարանում պեն տարված էր հայրենաէր սովորում: Կարգապահ, սիրական երգերի կատարուպարտանաւ աշակերտու մով:



ՆՆՁԵՑԵՔ ԻԱՂԱՂ, ԱՆՄԵՂ ԶՈՂԵՐ



Ո՞վ կարող է հարկավոր բաներ գտնել՝ պիտիկոն համար հինգ թանկագին հարազատի կորցրած մարդուն: Եվ մի՞թե նման բաներ կան այլ լեզուներում: Հիսուն տարեկան էլ չկա ԱՆՐԻՍԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ, և ամեն օր ողբում է ամուսնուն, որդուն, դստերը, հարսին, թոռնիկին: Եվ այդ ողբին չի լինի վերջ, և տպապանքին՝ միկրոարտություն: Մնացել է միակ հույսը. այն աշխարհում «չկանդիպի», կտեսնի ներանց...

Ամուսինը՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ 49 տարեկան էր: Ծնվել էր Հայկում: Երիտասարդ տարիքում հայրենադարձվել էր, տուն ու տեղ դրել մայր հայրենիքում: 1950-ին, աշխատանքի վարում աղետի ենթարկվեց, դարձավ առաջին կարգի հաշմանդամ: Այնուամենայնիվ,

չէր կորցրել հույսը, օջախի սյունն էր, թեև վիրավոր...

Որդին՝ ՏԻԳՐԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ ծնվել էր հայրենիքում: Միևնույն արև էր: Աշխատում էր Չկարովի անվան կարի արտադրական միավորումում: Բարի էր, գեղեցիկ դեմքով ու հոգով: Ընդամենը 28 տարեկան էր...

Դուստրը՝ ՍՐԲՈՒՀԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ ևս ծնվել էր Հայաստանում, 1966-ին: Զույալ հարյուր ու հոգի ուներ, քարձրիկ սարերի ջրի պես Աշխատում էր Լոբոր հետ, նույն մասնագիտու թրունն ունենա երկուսն էլ: Որ էլ հայտնվե՞ր՝ ժպիտ էր դեմքին, ու մարդիկ նրան նայելով ակամայից ծպտում էին: Հողին իջած հրեշտակի էր նման...

Հարսը՝ ԱՌԴԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ ծնվել էր 1964-ին, Թեհրանում: Նազուկ էր, շնորհաշատ, մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր: Աշխատում էր նույն միավորումում, Տիգրանի ու Սրբուհու հետ: Նոր զավակներ պիտի պարզեն ազգին, ավաղ...


Ծակատագիրն ընդամենը երկու գարուն պարզեն թանկագին թրոնիկին՝ ՍԱՄՍՈՆԻԿԻՆ: Խոհեմ էր մեծի պես, քաղցր ու անգին: Ընտանիքի ուրախությունն էր, գերաստանի հույսը...

Իր ծնողների, հորաքրոջ ու պապիկի պես ինքն էլ չտեսավ 1988-ի դեկտեմբերի 8-ի սուս վտոջ:

Նմջեցեք խաղաղ, անմեղ զոհեր, և Աստված պահապան Ձեր հոգիներին:



Օիրակի գերեզմանատանը խաչքարի բացման արարողության ժամանակ: Լուսանկարը՝ Ս. Գուլյանի



ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱԶԳԵՆ ՎԱՀԱԳՆԻ

Ծնվել է 1964 թ. օգոստոսի 10-ին: Պոլիտեխնիկական ինստիտուտի երկրորդ կուրսի մեխանիկական ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող էր...

Պատմում է մայրը.— Վազգենս «Որդիներ» փոքրիկ պատմվածքի այն երրորդ որդին էր, որ թողած խաղ ու ամեն ինչ, վազում է ծնողին օգնության: Ընկերասեր էր, մարդասեր, կատակասեր, հարգանք ու պատիվ իմացող:

... Այդ օրը՝ դեկտեմբերի 7-ին, Վազգենս վաղ առավոտյան գնաց կահույքի ֆարիկա՝ աշխատանքի: Սիրահար վաճ էր իր գործին: Ընդմիջման ժամին տուն է եկել (ֆարիկային մոտ էր), նախաձաշել և կրկին ևս է վերադարձել: Փրկված ընկերներն ասում են, որ Վազգենը նոր էր ձեռքը մեկնել աշխատանքից խալաթին, երբ սկսվեց մահաբեր երկրաշարժը: 1986 թ. «Բանվորուհի» Վազգենիս մապին գրել էին, «Բանվորական տեղում կատարյալ մարտություն ու կարգ ու կանոն է: Այստեղ անօրինություն է անում Վազգեն Մանուկյանը: Նա ճ ամառ աշխատանքային ըստած ունի, բայց արդեն վայելում է գործընկերների սերն ու համակրանքը...»:



ԸՆՏԱՆԻԳՈՎ...

Զարսդեան ժամին նրանք տանն էին, երիտասարդ ամուսիններ ԱՎԵՏԻԿ ԱՐՏՈՒՑԻ ՀՈՎԱՍԹԵԱՆԸ, ԱԼԻՅԱ ՊՈՂՈՍԻ ԱՎԵՏԻՅԱՆԸ և նրանց երեքամյա որդին՝ ԱՃՈՏԻԿԸ: Աշխատանքի գնալուց առաջ ցածե՞ր ծնողները այդպիսի էլ չնապաստան գրուանքի դուրս բերել իրենց սիրաասն զավակին:

Ավետիքը աշխատում էր վերստական արքերի գործարարում, Ալիսան՝ գոյպա

լի ֆարիկայում: Հարևան-քարեկամների ու աշխատանքային ընկերների շրջանում նրանք հարգված էին քարի ու աշխատասեր, խաղաղ բնավորության համար: Երազանքներ շատ ունենա, ավա՞ղ, դրանք փշուր-փշուր եղան իրենց՝ Հեղափոխության պողոտայի 1-ին «Բ» շենքի նման: Կյանքից հեռացան՝ որդուն գրկած, խոր կակի՞ծ թողնելով հարազատների սրտերում, ապտուսներ ու ցավ պատճառելով իրենց քարեկամներին ու ծանոթներին...

ԹՈՂ ՈՉ ՄԻ ՄԱՅՐ ՉՏԵՍՆԻ ԱՅՍՊԻՍԻ ՎԻՇՏ



ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՎՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1982 թ. փետրվարի 24-ին, Կոմայրի քաղաքում, տեքստիլագործների ընտանիքում: Սովորել է Տերյանի անվան դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել հաստոցաշինական տեխնիկումում:

1975 թ. աշխատում էր գույպեղենի արտադրական միավորման կոտտոն արտադրամասում որպես գործող բանվորուհի: Վայելում էր աշխատանքային ընկերների սերն ու հարգանքը:

Աղետի օրը Սուսաննան իր միակ դստեր՝ Թ ամսական ԱՆԺԵՎԱՅԻ հետ, զոհ դարձավ բրոնչիտի պնակաբանում:



ԱՆԱՀԻՏ ՀԱՎՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1958 թ. Կոմայրի քաղաքում: Սկզբում ուսանել է Տերյանի անվան դպրոցում, այնուհետև՝ թեթև արդյունաբերության տեխնիկումում: Տեխնիկումն ավարտելուց հետո ամուսնացել է և աշխատանքի անցել կարի արտադրական միավորումում:

Երկու երեխա ունի: Ալիկը աղետի ժամանակ էղել է ՆՅ 19 դպրոցում և փրկվել: Անահիտն իր դստեր՝ Անիի հետ տանն էր և զոհ գնացին դաժան տարերքին:

Անահիտը բարի էր բոլորի նկատմամբ, վայելում էր մեծերի ու փոքրերի համակրանքը, աշխատասեր էր և աշքի էր ընկնում լավ բնավորության: Նա ամուսնու և երեխաների հետ բնակվում էր «Եռանկյունի» թաղամասի ՆՅ 7 շենքում:



ԶԱՐՈՒՀԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ
Կյանքից հեռացավ դեռ 30 տարին չբոլորած, երբ նոր միայն պատրաստվում էր ճաշակել կյանքն իր ամբողջությամբ, անմնացորդ ու լիարունակ: Քանի-քանի երազներ մնացին թերի ու անավարտ:

Զարուհի Ծատուրյանը ծնվել է 1969 թվականին, ավարտել ՆՅ 24 միջնակարգ դպրոցը, այնուհետև ՆՅ 18 պրոֆտեխնիկումն ավարտել: Աշխատում էր ռեզիստորների «Օմեգա» գործարանում:

Երկրաշարժը Զարուհուն գտավ սեփական տանը, որը և նրան գերեզման դարձավ:

ԽՂՆԻ ՈՒ ԲԱՐԻՈՒՐՅԱՆ ԹԵՂԱՊՐԱՆԻՈՎ

Կիևցի ուսանողուհի Աննա Ժորավյուովան օրեր առաջ ծա մանել էր Լեհիական և անհատույց որպես սանիտարուհի էր աշխատում Բիվանդանոցում: Նրա բարի ձեռքերն ու սիրտը օգնեցին շատերին, ովքեր ողբանց կարիքն ունեին:

Մենք Աննա Ժորավյուովայի

հետ զրուցեցինք «Զվարթնոց» օդանավակայանում նրա Կիև մեկնելուց առաջ: 23-ամյա Ժորավյուովան միշտ այնտեղ է, որ տեղ դժբախտություն է: Նա առաջիններից մեկն էր արձագանքել Զեռնոյի դժբախտությանը, ըստ կարելիության օգնելով վթարից տուժած բնակիչ-

ներին: Ապշում ես, թե որտեղից այդքան արիություն, վեհանձնություն ու բարություն այդ փխրուն աղջկա մեջ:

— Իհարկե, իմ մասնակցությունը մի կաթիլ էր ծովում, բայց ես այլ կերպ չեմ կարող,— ասում է նա:

Երկրաշարժի երկրորդ օրը

օգնություն ցույց տալու համար Լեհիական ժամանեցին Պատիգորսկի դեղագործական ինստիտուտի մի մեծ խումբ գիտաշխատողներ: Զնայած իրենց պաշտոններին և գիտական աստիճաններին (երբ մարդիկ դժբախտության մեջ են, պատվախնդրության տեղը չէ),

նրանք աշխատում էին որպես շարքային բժիշկներ, եթե չէին բավականացնում մասնագետները, բեռնակիրներ էին, երբ լայն հոսքով սկսեցին դեղորայք և բուժաբարավորումներ ստացվել, դեղատնային վրաններ էին բացում տուժած թաղամասերում, առաջին բուժօգնությունը ցույց տալիս կարիքավորներին:

(Արմենակրեայի թղթակիցներ)



ԶԵՄՄԱ ՏԻՐԱՆԻ ԱՂԱՅԱՆ

Ծնվել է 1958 թ.: Ավարտել է թեթև արդյունաբերության տեխնիկումի հաշվապահական բաժինը: 10 տարի շարունակ աշխատել է կոշիկի ֆաբրիկայում: Աշխատել է իմաստալից, հաշտություններով լեցուն, դժվարություններ շրջանցելու համարությամբ:

Երկրաշարժի ժամանակ նա ընդմիջում չի արել, պատմելով ընկերուհիներին հոր՝ Տիրանիկի Զադոյի Աղայանի մասին, որը չորս տասնամյակ ան ընդմեջ աշխատել է նույն ֆաբրիկայում:

Տարիներ շարունակ նա էղել է կոմերտական և արհմիութենական աշխատանքների աջակցի, արտադրամասի տեղ կոմի նախագահ: Նա Մոսկովյան շրջադրոհի պատասխանատու էր: Դեռ որքան չգրված էջեր կային սիրելի Զեմմայի կենսագրությունում...



ԶՈՒԼԻՆՏՍԱ ԿՈՐՅՈՒՆԻ ԱՄԻՐՅԱՆ

1939 թ. ապրիլի 13-ին է ծնվել: Կրթությունը ըստուացել է Աղայանի անվան դպրոցում: Տեքստիլ կոմբինատում բանվորուհի է աշխատել: Որոշ ժամանակ անց, վարպետանալով ու հմտանալով աշխատանքում, տեղափոխվել է «Շիրակ» կոմբինատ:

Երկու երեխաների մայր էր և լավ բանվորուհի: Մեքենաների միջից անցնելով կարող էր ասել, թե որ մեքենայի ինչ մասն է «կադրում»: Միակ նպատակն էր աշխատել ու նպատակին հասցնել երեխաներին: Երեխաներից այն կողմ ոչինչ չէր տեսնում:

Ամբողջ արտադրամասն ընդմիջման էր մեկնել, մինչդեռ Զուլիկը շարունակում էր աշխատել: Մահն հենց այդտեղ էլ գտավ նրան...



ՍՎԵՏԼԱՆԱ ՅՈՒԱԿԻ ՄՐԻԳԱՐՅԱՆ

1957 թվականի հուլիսի 27-ին է ծնվել: Ստացել է միջնակարգ կրթություն, ապա ուսումը շարունակել է թեթև արդյունաբերության տեխնիկումում: Կարի ՆՅ 2 արտադրական միավորումում էր աշխատում: Մեքենայի առաջ էլ կրճքեց մահկանացուն՝ չարաղետ երկրաշարժի պահին, 3 երեխաներին որք թողնելով:

Որակյալ բանվոր և հմուտ դերձակ էր Ալեոյանա Մարգարյանը բարի ու ազնիվ կին, սիրող մայր և այրախիսն էլ կմնա մարդկանց մտապատկերում, հիշողության մեջ:



ԱՐՓԵՆԻԿ ՆՇԱՆԻ ԵԳԱՆՅԱՆ

Ընդամենը 36 տարեկան էր Արփենիկը, երկու երեխայի մայր:—Օտտ ազնիվ սիրտ ունի հարսս,—պատմում է սկեսրայրը,—գիշող էր, մարդամոտ, քաղաքավարի ու խոհեմ:—«Մեծի հետ» մեծ, փոքրի հետ՝ փոքր».—կարծես նրա մասին է ասված: Աշխատում էր գույպայի ֆաբրիկայում, լավ էր աշխատում, որի համար գործընկերները շատ էին հարգում նրան: Արփենիկը հինգ ամիս անտրտուն, հարազատի պես խնամեց անկողնային ծանր հիվանդ մորս: Նա իմ հարսը չէր, այլ աղջիկս...Բոլորիս հետ հավասար մասնակցեց մեր սեփական տան շինարարությանը, ավաղ... չվաչեց:



ԲՈՒՐԱՍՏԱՆ ՎԱԳԱՐՇԱԿԻ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Բուրաստանից այս հին, միակ լուսանկարն է պահպանվել: Հովունի, Հացիկ, Մախիլյան, Կարմրաքար և Երազավորս գյուղերի աղագ, միջին սերնդի շատ մարդիկ կհիշեն սիրելի ու շազմավատակ մանկավարժին: Իսկ 1971 թվականից մինչև իր կյանքի վերջին պահը Բուրաստան Արրահամյանն աշխատում էր Լեհիականի ՆՅ 9 միջնակարգ դպրոցում, որտեղ էլ, երկրաշարժի ժամանակ, շենքի ավերակների տակ կնքեց իր մահկանացուն, զոհվեց 64 տարեկանում՝ քաղմաթիվ աշակերտների ու դասատուների հետ մեկտեղ: Նա վայելել է մանկավարժների, աշակերտների ու նրանց ծնողների անկեղծ հարգանքը:

ՍՈՑԻԱԿ (ԵՆԵՆԱ) ԱՐՇԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՍՈՒՆՑԱՆ

1985 թ. ծնվել է Կոմայրի քաղաքում: 1958 թ. աշխատում էր կարի № 2 արտադրական միավորումում մինչև իր կյանքի վերջին վայրկյանները: Բազմիցս արժանացել է խրատասանի և պարգևների, աշխատանքային ընկերների, շրջանում միշտ եղել է հարգված ու սիրված:

Ծիծաղկոտ, բարի աչքեր, նուրբ ու բնորոշ սիրտ ուներ մայրս «Անշափ երջանիկ եմ փոքրիկ ընտանիքիս՝ Յ դուստրերիս և ամուսնուս հետ», — սիրում էր կրկնել մայրս:

Այո՛, սիրելի մայր, երջանիկ էլ կապրեիր, եթե ժամանակից շուտ չկտրվեիր կյանքիդ: Թե՛ղը: Դեկտեմբերի 5-ի երեկոյան մտերմիկ գրուցում էիր դուստրերիդ հետ և համկարծ ասացիր. «Այս պիտու մի տեսակ անհանգիստ է: Ուզում եմ լաց լինել: Ինձ թվում է, թե վատ բան է սպասվում: Միայն թե, ինչ-որ լինելու է, թող ինձ հետ լինի»:

Այդպես էլ եղավ, թանկագին ծնող, սիրելի իմ մայր: Դեկտեմբերի 7-ի առավոտյան գնացիր աշխատանքի ու



այնս չվերադարձար: Հեռացար և ընդմիշտ արցունքով լցրիր քո Յ դուստրերի աչքերը: Մնացինք քո տունդարձի /անապարհին:

ԷԼՅԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐԱ ԼՅՈՎԱԾԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Արալիկ, լուսնեւ որդիս, 1965 թ. օգոստոսի 19-ին ծնվեց: Միակն էր՝ այնպես պայծառ սիրտ ու կամեցողություն ուներ:

Փոքրուց՝ մինչև 9-րդ դըպրոցում շրջանավարտ դասնալը՝ ամեն ինչի մաքուրն էր սիրում: Երբ արտի թըրթոտով դպրոց էի այցելում, բերկրանքով լսում էի դասղեկի, ռատցիչների, տնօրենի խոսույանի և ուսնավար Մաթևոսյանի կրկնապատկան խոսքերը: Ինձ՝ մոր հետ հոգեպես շատ էր կիսվում (հոր

հետ՝ հոր պես գործարար էր): Մի օր, երբ դեռ 5-րդ դասարանի աշակերտ էր, իր պատկերացրած ասպազան ուրվագծեց, այն է՝ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել ուսումնարան սննդի գծով: Աղետից սուաշ աշխատանքի տեղավորվեց սննդի ուսումնարտադրական կոմբինատում, ուր էլ գոհվեց:

Սերը՝ շուալ, սիրտը՝ բաց և ձեռքն էլ՝ բարի, բայց չար եղավ բախտը: Այնքան չար, որ վերջերս էլ չկանգնեցրեց անհայտ ու անաստված մի բանի չարագործների, որոնք



համեւտարել են գերեզմանի վրա սարքած թիթեյա տանիքը: Այս սրբապղծությունը մի նոր վիշտ է մեզ:

Տեր և տիկին ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐ



ԱՆԱՀԻՏ ՎԵԼԻՍԱՆԻ ՄԿՐՏՅԱՆ

Մեր ազգի համար ողբերգական այն դեկտեմբերից անցել է ավելի բան երկու տարի: Կույսիկ երկու օր չեն սպրել Անահիտի հարազատներն ու զավակները առանց նրան հիշելու: Եվ երբեք չեն մոռանա նրա ծայիտը, խոսքը, քայլվածքը...

Ծնվել է 1955-ին: Աճ 28 դպրոցում ստացել է միջնակարգ կրթություն: Երկար տարիներ անձնվեր աշխատել է Լուկաշինի անվան մանկաձեռքային ֆարքիկայում: Երեք երեխաների մայր էր: Զոհվեց 6-ամյա Նելլիի հետ, 2 անշափահասներին՝ Լեյլին ու Կարենին որը թողնելով:



ԲԱՍՏՐԱԶՅԱՆ ԵՆԵՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Տիեզերքի լուսատուները քեզ էլ այս կյանքում միայն 14 գաղտնի տվեց ասրելու համար: Աճ 20 դպրոցում ընդմիշտ մը մացածներից մեկն էլ դու էիր: Ծնող՝ իր սիրելի էիր, ներանց հույսը, ուրախությունը: Զարմանքն էր ստույգ քո սիրունիկ դեմքին, նաև հարց... «Այս ի՞նչ պատահեց». Եվ ոչ ոք քեզ չպատասխանեց: Հայաստան-քարտուտան աշխարհի քարտերն էլ քո և դասընկերներից շատերի, հազարավոր հայերի ողբերգական վախճանի պատճառը դարձան: Նմջիր խաղաղ, քո հիշատակը քո ծնողների, քո հարազատների, քեզ ճանաչողների սրտերում կլինի հավետ:



ԵՆԳՈՑԱՆ ՀԱՄՄԻԿ ՍԵՐՑՈՒԹՅԱՆ

Ո՛չ ծնողներ, ո՛չ հարազատներ, ո՛չ էլ քույր ու եղբայր երբեք չեն հաշտվի քո չլինելու հետ: Միայն հարցնողին կիսաձայն կասեն. «Լուկաշինի ժամանակ մնաց Աճ 20 դըպրոցի փլատակների տակ, փրկվել չկարողացանք»: Ավաղ, հազարավոր անմեղ բալիկների պես դու էլ անհատակվեցիր՝ քեզ հետ տանելով վատվորում երազներդ, վըշտի ու տրտմության անտանելի ծանր բեռը թողնելով փրկված հարազատների սրտերի վրա: Ընդամենը 14 տարեկան էիր՝ խելոք ու խոնարհ, բարի ու պարտաճանաչ թե դպրոցում, թե տանը: Զո՛ւ անմեռ, լուսավոր հիշատակը քո հարազատների միակ մահաբարձն է...

ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայրենադարձներ Հարություն և Ազնիվ Ասեղյանների անհաճախ ուրախությունն էր միակ արու զավակ Վարդևարը: 1953 թվականին էր ծնվել, Կոմայրիում, դպրոց հաճախել ու մեծացել: Կյանքին սիրահարված էր Վարդևար Ասեղյանը:

Օտար էր սիրում երգ-երաժշտություն: Հայկական հոգեպարար մեղեդիները գեղուն էին նրան, ինքն էլ գեղուն էր ընկերներից իր երգ ու նվագով, անմիջականությամբ: Սիրով էր մասնակցում ծանոթ ու անծանոթ մարդկանց տոնախմբություններին, իր հոգու խնդրությունը տալով մարդկանց:

Աշխատանք էր, փորձում էր տարբեր մասնագիտություններ: Աշխատել է փոստատար, վարսավիր, բանվոր: Անմիջապես մտերմանում էր մարդկանց հետ, որովհետև սրտի ջերմություն ուներ մարդ

կանց տալու: Լիստատ բաժին էր հանում իր անկեղծ սրտից:

Կոշիկի ֆարքիկայում աշխատելու վերջին օրն եղավ 1988 թվականի դեկտեմբերի 7-ը: Ու ծխում է վիշտը կենսաթոշակառու Ասեղյանների



հոգում, հազարավոր գոհ ունեցող ծնողների նման: ԱՐԱՄ ԲԱՂՂԱՍՏԱՐՅԱՆ

Շ Ա Ռ Լ Ը

Մ Ե Ձ

Հ Ե Տ Է Ր



ԴԱԺԱՆ ՍԻՄՖՈՆԻԱ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Երեկ... Դարերը իրենց ճանաչում... Տախտիկ օջախներս ֆանդեցիր եւ արեցիր գերեզմանոց... Ինչո՞ւ, տառապած ու հայածուած հայերիս ո՞ր մեղքի համար... Անհասկանալի է, թե ինչու արեցիր դարերով հպարտ կանգնած եկեղեցիները, որ տեղ ժողովուրդը իր հատան էր ամրացնում, ով Աստուած, ինչո՞ւ... ինչո՞ւ...: Միայն դարերից եկող ու դարեր գեցող առաջնորդների արձաններն են հպարտ, ամուր կանգնած իրենց պատուանդաններին...: Միքե՛լ այս շես տեսնո՞ւմ, ով Աստուած...:

Մեր ծնեղատները դարձան նորածինների ու մայրերի գերեզմանոց... տառապե՛լ ու ողբացե՛լ հայեր...: Մեր մանկապարտեղները դարձան մանուկների գերեզմանոց... վշտացե՛լ խեղճ մայրեր...: Մեր դպրոցները դարձան երեխաների ու դասագրքերի ավերակների կույտ... տառապե՛լ ու լացե՛լ սիրելի մանկավարժներ...:

Պակասեցին արեւին ու աշխարհին ժպտացող սեւաշեյա երեխաները, պատահիներ...: Մերունց տնող սերունդը գեցց, պղտոր ու վշտացող հոտող գետի պէս՝ պակելով իր արեւին անհավատալիքներով վաղուց ի վեր մամուկայել են ակաճեցող, փակել աչքերը...:


Մարդ արարածներին տանջանքները այլեւս ենգ չեն օրօրուող մատղաշ ուղիներ...:

So, ժամե տեւաւր, ինչո՞ւ ծիծեռնակների բները ֆանդեցիր ու արեցիր արե...:

Եւ ով հրաշխ, երկնային աղէտից կարծես ֆար մարդ կանց ֆար ստերը փշրուցի...: Քիրտուր սպիտակ աղաճիներ մարդկանց հոգու վանդակներից դուրս բըռան ու լուր տարան Հայաստան՝ աշխարհին հասած կոր ծանարար աղէտի մասին: Աշխարհի բոլոր ծագերից բոան սրարոնից հգոր բագէներ ու օգնութեան հասան Մասիսի ստորոտում ծուարած Հայաստան աշխարհին...:

Մագող արեւի շողերից շառագունեց ողբ երկնակամարը...: Քիրտուր, բագմագոյն ծաղկեփնջեր բափուցին Հայաստան աշխարհի վրայ, գունազարդելով մեր լեռները, հովիտները, դաշտերը եւ բարձր շիրիմները...:

Մեր ցար դարձաւ մեր կորաշրնեղը ցար... Մեր ցար դարձաւ աշխարհի ցար... Մեր ցար բըրբեց մեր անմեղ սրտերը ու թողեց հազար ու մի ցա... Դիմացիր այս ցաւին էլ, իմ տառապած ժողովուրդ... Դիմացիր... ու աշխարհին ժպտալով անցիր: ՄՈՆՔՐԷՍԼ 14 ՏՈՒՆՈՒՄԱՐ 1990 թ.



Լուսանկարները՝ Վ. Կոտովի

ԽՍՀՄ-ի «ԱՐՏՏՆՏԱՆ»-Կ. ՀԱՇԻՎ ՀԱՄԱՐ 70001

ԼՈՍԱՆՔԱՆ, (Արմենյանի հատուկ թղթ):
ԽՍՀՄ արտաքին տնտեսական գործունեության բանկի («Արտտնտեսանկ») 70001 համարի վալյուտային հաշվում շարունակում են վալյուտային միջոցներ առացվել օտարերկ-

րյա քաղաքացիներից և շատ երկրների ֆիրմաներից: Հաշի վր բացված է Խորհրդային Հաստատանի՝ սաստիկ երկրաշարժից տուժած բնակչության օգնության ֆոնդին փոխանցումներ կատարելու համար: Ինչպես հաղորդեցին «Արտ-

տնտրանկից», առ այսօր նյութական օգնության ֆոնդին փոխանցումներ են կատարել ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Արևմտյան Գերմանիայի, Ծվեդիայի, Ավստրիայի, Իտալիայի, այլ երկրների տասնյակ ֆիրմաներ:

ԶԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԻՉՅԱՆ

Բազում երազներ ունեն հոգում այս գեղեցկուհին, այս սելիբներ կյանքին: Այնքան կյանքով աղեցուն էր բյուրեղյա այս հայուհին: 1981 թվականին էր ծնվել, Կոմայրիում:

Բարձր գնահատականներով ախարանց Մկրտիչ Արմենի անվան միջնակարգ դպրոցը: Տակավին 1-ին դասարանում էր սովորում Ջաքելը, երբ հաստատականորեն որոշեց բեռնաշրջանի դառնալ: Այս որոշումը համընկավ հոր հիվանդության հետ: Եվ բեռնաշրջանի դառնալու որոշումը նրան հանգիստ չէր տալիս...

Լուսն երազներով և բժշկուհի դառնալու հաստատականությամբ նա դիմեց բժշկական ինստիտուտ: Առաջին քննությունից, որ մայրենի լեզվից էր, վաստակեց գերազանց: Թվում էր, թե այլևս ոչ մի խոչընդոտ չի կարող ծառանալ, որ Ջաքելը կդառնա ուսանող իր նախասիրած մասնագիտությամբ: Երկրորդ քննությունից՝ կենսաբանությունից ճակատովեց:

Բժշկուհի դառնալու որոշումը



մը հետաձգեց Ջաքելը և նույն տարում բնդունվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Կոմայրիի մասնաճյուղի տեխնոլոգիական բաժնի: Ուսմանը զուգընթաց աշխատում էր կահույքի ֆաբրիկայի լաբորանտորիայում: 1982 թվականին ամուսնացել էր և ունեն երկու յուսաշյի աղջիկ:

Աղետը կահույքի ֆաբրիկա էլ թափանցեց ու պերսոնալություններ պատճառեց: Ամենամեծ կորուստը մարդկային կյանքերն էին: Ջաքելն էլ քացառություն չկազմեց, դարձավ անմեղ նահատակ: Բայց վերջին խոսքում չմոռացավ ամուսնուն ասել. «Դավիթ, երեխաներիս լավ կնայես»:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՑՑ ՏՐՎՈՒՄ

Կոչիկի «Մասիս» միավորման արտադրանքի պակաս ապատողը փաստորեն չի ըզգում: Եվ դա այն դեպքում, երբ տեղի ունեցած տարերային աղետից միավորման Լեհի մականի և Սպիտակի երեք խոշոր ֆաբրիկաները լրիվ շարքից դուրս են եկել:

Աշխատելով առանց շարքի ու կիրակի օրերի, երկարացված հերթափոխերով, միավորումը սխալ է զգալիորեն ավելի շատ արտադրանք թո-

դարկել, քան նախատեսված է նորմայով: Որոշել է չնորմավորված հերթափոխների ժամանակ վաստակած բոլոր միջոցները փոխանցել երկրաշարժից տուժածների հաշվին: Միավորումում հազուադեպ և մթերքներ են հավաքվում: Ամեն օր աղետյալ շրջաններ են ուղարկվում անհրաժեշտ բեռներով մեքենաներ: Միավորման աշխատողներից կազմված են փրկարար աշխատանքներին մասնակցող ջոկատներ:

(ԱՐՄԵՆԳՐԵՍ)

ԲԱՑՑ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Կ Ն Ա Հ Ա Ն Ջ Ի . . .

Բողոքում է սիրտը: Բողոքում է բանականությունը: Չես ոգում հավատալ տողերին ու լուսանկարներին, որ մեր խրմ բագրությանը ամեն օր հայտնում են սեփական թղթակիցները Լեհի մականից, Կիրովականից, Սպիտակից: Քաղաքներ, որոնք համանուն են դարձել մարդկային ողբերգությանը: Քաղաքներ, որոնք ճանաչվել են ամբողջ աշխարհում և որոնց օգնում են ամբողջ աշխարհով:

Երկիրը՝ անբուն հերթափոխի մեջ է: Բժիշկները, շինարարները, վարորդները, ավիատորները աշխատում են չժալելով ձեռքերը: Ամենադժվարին տեղամասերում խորհրդային բանակի զինվորներն են: Թողնելով լաբորանտորները, նրանք նորից համախմբվել են ուսանող-մարտիկների շինարարական ջոկատներում: Հեռագրերը, նամակները թռչում են աղետյալ քաղաքների հասցեներով, ամեն օր անձնական և կողմնակի դրամական փոխա-

դրումներ են փոխանցվում բանկերում: Վիշտը սահմաններ չունի: Անզիական հրշեջները, ֆրանսիական, շվեյցարական լեռնափրկարարները, ԱՄՆ-ի և Իտալիայի մասնագետները ծախում են Հայաստան և առանց հապաղելու սկսում են աշխատանքները, իսկ այնտեղ շատ են աշխատանքները՝ դժվարին, հաճախ վտանգավոր, ֆիզիկական ուժեր և հոգեկան մեծ կայունություն պահանջող: Հենց այս հատկանիշներն էլ միավորում են Հայաստան օգնության եկող հազարավոր մարդկանց:

Փորձանքը եկել է: Այն սրգացող թաշկինակներով ծածկել է մայրերի, կանանց, քույրերի գլուխները, սուր ցավով արձագանքելով միլիոնավոր արտերում: Բայց դժբախտությունը կնահանջի, այն անպաղման կնահանջի, քանի որ նրա դեմ գնացին միասնական ճակատով:

«ՏՐՈՒԻՑ»

«ԿՈՒՄԱՑՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ԿՈՒՄԱՑՐԻ ԲԱՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՑԻՍՅԱՆ Փ. 47